



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N^o-17Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 172-րդ հոդվածի պահանջները, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ստեղծել «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Մահմանել, որ՝ «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դատական դպրոց) գործունեության առարկան և նպատակներն են՝

ա) դատավորների թեկնածությունների ցուցակի կազմման նպատակով անցկացվող որակավորման ստուգումը, որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը, Դատական դպրոցն ավարտածների, պաշտոնեական պիտանիության և առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստումը, վերապատրաստման անհատական դասընթացների անցկացումը, դատական ծառայողների մասնագիտական վերապատրաստումը և դատական կարգադրիչների վերապատրաստումն ու հատուկ ուսուցումը.

բ) գիտատեսական և կիրառական հետազոտությունները, փորձագիտական գնահատումները.

գ) մասնակցությունը միջազգային գիտակրթական համագործակցությանը.

դ) տեղեկատվական-վերլուծական նյութերի պատրաստումը:

4. Դատական դպրոցը որպես ձեռնարկատիրական գործունեության տեսակներ կարող է իրականացնել՝

ա) հետազոտություններ և մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում.

բ) հրատարակչական գործ:

5. Դատական դպրոցի ընդհանուր կառավարումը և ընթացիկ գործունեության վերահսկումն իրականացնում է Դատական դպրոցի կառավարման խորհուրդը:

Դատական դպրոցի կառավարման խորհուրդը՝

ա) հաստատում է Դատական դպրոցի ռազմավարական և ուսումնական ծրագրերը.

բ) սահմանում է մրցութային հիմունքներով դատական դպրոցի տնօրենին նշանակելու կարգը, նշանակում և ազատում է Դատական դպրոցի տնօրենին, հաստատում տնօրենի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի պայմանները, սահմանում տնօրենի վարձատրության կարգը և պայմանները.

գ) տարեկան մեկ անգամ լսում է Դատական դպրոցի տնօրենի հաշվետվությունը.

դ) վերահսկողություն է իրականացնում Դատական դպրոցին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

ե) տնօրենի ներկայացմամբ համաձայնություն է տալիս Դատական դպրոցի սեփական գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

զ) սահմանում է Դատական դպրոցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության կարգը, որոշում կայացնում Դատական դպրոցի շահույթի օգտագործման վերաբերյալ.

է) հաստատում է իր աշխատակարգը, Դատական դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, դատավորների թեկնածությունների ցուցակի կազմման նպատակով անցկացվող որակավորման ստուգմանը մասնակցող անձանց երաշխավորագիր-նամակների ձևերը, ինչպես նաև Դատական դպրոցի հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

ը) սահմանում է Դատական դպրոցի ունկնդիրների տարեկետման, ունկնդիրների նկատմամբ կարգապահական տույժերի կիրառման հիմքերը և կարգը, տնօրենի ներկայացմամբ կիրառում է կարգապահական տույժեր.

թ) հաստատում է Դատական դպրոցում դասավանդող դասախոսների թվային և անհատական կազմը.

ժ) սահմանում է Դատական դպրոցում քննությունների անցկացման կարգը և պայմանները, ունկնդիրների գիտելիքների գնահատման ու քննական միավորների հաշվարկման, քննությունների վերահանձնման կարգը.

ժա) սահմանում է դատավորների թեկնածությունների ցուցակում Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասով ընդգրկված անձանց վերապատրաստման անհատական դասընթացներ անցկացնելու կարգը և պայմանները.

ժբ) դատարանների նախագահների խորհրդի ուսումնական հարցերով հանձնաժողովի մշակված ուղենիշերի համապատասխան հաստատում է դատավորների թեկնածուների և առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց վերապատրաստման ծրագրերը և դրանց անցկացման ժամանակացույցը.

ժգ) սահմանում է դատավորների և պաշտոնեական պիտանիության ցուցակներում ընգրկված անձանց վերապատրաստման ծրագրերի իրականացման կարգը, ժամանակացույցը, դրանց մասին ծանուցման կարգը, վերապատրաստում իրականացնող դասախոսների վարձատրության կարգը.

ժդ) քննարկում և հիմնադրի հաստատմանն է ներկայացնում կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունները.

Ժե) իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 05Ն որոշումը:

7. Հայաստանի Հանրապետության դատական դպրոցի տնօրենին՝ մինչև 2008 թվականի հունվարի 1-ը՝ սահմանված կարգով ապահովել «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը:

**Հայաստանի Հանրապետության
վճռաբեկ դատարանի նախագահ**

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

**2007թ. դեկտեմբերի 3
ք. Երևան**

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դատական դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Դատական դպրոցի գործունեության կարգը սահմանվում է օրենքներով, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

3. Դատական դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվ: Դպրոցը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4. Դատական դպրոցն այլ կազմակերպությունների հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

5. Դատական դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Դատական դպրոցի անվանումն է՝ «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, կրճատ՝ «Դատական դպրոց» ՊՈԱԿ:

7. Դատական դպրոցի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0057, ք.Երևան, Նազարբեկյան թաղամաս 40:

II. ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. Դատական դպրոցի գործունեության առարկան և նպատակներն են՝

ա) դատավորների թեկնածությունների ցուցակի կազմման նպատակով անցկացվող որակավորման ստուգումը, որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը, Դատական դպրոցն ավարտածների, պաշտոնեական պիտանիության և առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստումը, վերապատրաստման անհատական դասընթացների անցկացումը, դատական ծառայողների մասնագիտական վերապատրաստումը և դատական կարգադրիչների վերապատրաստումն ու հատուկ ուսուցումը.

բ) գիտատեսական և կիրառական հետազոտությունները, փորձագիտական գնահատումները.

գ) մասնակցությունը միջազգային գիտակրթական համագործակցությանը.

դ) տեղեկատվական-վերլուծական նյութերի պատրաստումը:

9. Դատական դպրոցն իր առջև դրված նպատակներին համապատասխան՝

ա) կազմակերպում է դատավորների թեկնածությունների ցուցակի կազմման նպատակով անցկացվող որակավորման ստուգում.

բ) կազմակերպում է որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.

գ) կազմակերպում և անցկացնում է Դատական դպրոցն ավարտածների, պաշտոնեական պիտանիության և առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում.

դ) կազմակերպում և անցկացնում է դատավորների թեկնածությունների ցուցակում Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասով ընդգրկված անձանց վերապատրաստման անհատական դասընթացներ.

ե) կազմակերպում և անցկացնում է դատական ծառայողների մասնագիտական վերապատրաստում.

զ) կազմակերպում և անցկացնում է դատական կարգադրիչների վերապատրաստումն ու հատուկ ուսուցում.

է) կազմակերպում և անցկացնում է սեմինարներ, գիտաժողովներ, հրատարակում է ուսումնական և այլ գրականություն, կարող է ունենալ մամուլի միջոց.

ը) մշակում է Դատական դպրոցի ուսումնական ծրագրեր.

թ) սահմանված կարգով ստեղծում է գիտական խորհուրդներ կամ համագործակցում է իր իրավական գործառույթներին համապատասխան այլ գիտական խորհուրդների հետ.

ժ) կազմակերպում է իրավաբանական գրադարանային ֆոնդի, ուսումնամեթոդական, ձայնատեսադարանների, ֆիլմադարանների հիմնադրում և կատարում դրանց պահպանման աշխատանքներ.

ժա) կնքում է պայմանագրեր Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, համագործակցում օտարերկրյա կազմակերպությունների հետ, անդամակցում միջազգային կազմակերպություններին և ցանցերին.

ժբ) իր գործունեության նպատակներին համապատասխան կարող է զբաղվել հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով.

ժգ) իրականացնում է օրենքներով, սույն կանոնադրությամբ, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումներով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլ գործառնություններ:

10. Դատական դպրոցը որպես ձեռնարկատիրական գործունեության տեսակներ կարող է իրականացնել՝

ա) հետազոտություններ և մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում.

բ) հրատարակչական գործ:

11. Դատական դպրոցը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

12. Դատական դպրոցը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով, հիմնադրի որոշման հիման վրա, հանդիսանալ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից:

III. ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Դատական դպրոցի կառավարումն ու ղեկավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան, հիմնադրի, կառավարման խորհրդի և տնօրենի գործառնությունների իրականացմամբ:

14. Հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի բացառիկ լիազորություններն են՝

ա) Դատական դպրոցի հիմնադրումը.

բ) Դատական դպրոցի կանոնադրության հաստատումը ու դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը.

գ) Դատական դպրոցի վերակազմակերպումը և լուծարումը.

դ) Դատական դպրոցի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ե) օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

15. Դատական դպրոցի ընդհանուր կառավարումը և ընթացիկ գործունեության վերահսկումն իրականացնում է Դատական դպրոցի կառավարման խորհուրդը:

16. Դատական դպրոցի կառավարման խորհուրդը՝

ա) հաստատում է Դատական դպրոցի ռազմավարական և ուսումնական ծրագրերը.

բ) սահմանում է մրցութային հիմունքներով դատական դպրոցի տնօրենին նշանակելու կարգը, նշանակում և ազատում է Դատական դպրոցի տնօրենին, հաստատում տնօրենի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի պայմանները, սահմանում տնօրենի վարձատրության կարգը և պայմանները.

գ) տարեկան մեկ անգամ լսում է Դատական դպրոցի տնօրենի հաշվետվությունը.

դ) վերահսկողություն է իրականացնում Դատական դպրոցին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

ե) տնօրենի ներկայացմամբ համաձայնություն է տալիս Դատական դպրոցի սեփական գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

զ) սահմանում է Դատական դպրոցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության կարգը, որոշում կայացնում Դատական դպրոցի շահույթի օգտագործման վերաբերյալ.

է) հաստատում է իր աշխատակարգը, Դատական դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, դատավորների թեկնածությունների ցուցակի կազմման նպատակով անցկացվող որակավորման ստուգմանը մասնակցող անձանց երաշխավորագիր-նամակների ձևերը, ինչպես նաև Դատական դպրոցի հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

ը) սահմանում է Դատական դպրոցի ունկնդիրների տարեկետման, ունկնդիրների նկատմամբ կարգապահական տույժերի կիրառման հիմքերը և կարգը, տնօրենի ներկայացմամբ կիրառում է կարգապահական տույժեր.

թ) հաստատում է Դատական դպրոցում դասավանդող դասախոսների թվային և անհատական կազմը.

ժ) սահմանում է Դատական դպրոցում քննությունների անցկացման կարգը և պայմանները, ունկնդիրների գիտելիքների գնահատման ու քննական միավորների հաշվարկման, քննությունների վերահանձնման կարգը.

ժա) սահմանում է դատավորների թեկնածությունների ցուցակում Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասով ընդգրկված անձանց վերապատրաստման անհատական դասընթացներ անցկացնելու կարգը և պայմանները.

ժբ) դատարանների նախագահների խորհրդի ուսումնական հարցերով հանձնաժողովի մշակված ուղենիշերի համապատասխան հաստատում է դատավորների թեկնածուների և առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց վերապատրաստման ծրագրերը և դրանց անցկացման ժամանակացույցը.

ժգ) սահմանում է դատավորների և պաշտոնեական պիտանիության ցուցակներում ընդգրկված անձանց վերապատրաստման ծրագրերի իրականացման կարգը, ժամանակացույցը, դրանց մասին ծանուցման կարգը, վերապատրաստում իրականացնող դասախոսների վարձատրության կարգը.

ժդ) քննարկում և հիմնադրի հաստատմանն է ներկայացնում սույն կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունները.

ժե) իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Դատական դպրոցի կառավարման խորհրդի իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

17. Դատական դպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Դատական դպրոցի տնօրենը:

18. Դատական դպրոցի տնօրենն օրենքով, հիմնադրի և կառավարման խորհրդի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Դատական դպրոցի գործունեությունը:

19. Դատական դպրոցի տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Դատական դպրոցի անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի ու կառավարման խորհրդի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Դատական դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է Դատական դպրոցի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) նշանակում և աշխատանքից ազատում է Դատական դպրոցի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

զ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

է) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Դատական դպրոցի կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

ը) սահմանում է Դատական դպրոցի կառուցվածքային ստորաբաժանումները և դրանց կառուցվածքը:

IV. ԴՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Դատական դպրոցի սեփականությունը ձևավորվում է Դատական դպրոցի հիմնադրման ժամանակ հիմնադրման մասին հիմնադրի որոշմամբ սահմանված չափով հանձնված գույքից, հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Դատական դպրոցի գործունեության ընթացքում ձևավորված և ձեռք բերված գույքից: Դատական դպրոցի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել նաև՝

ա) պետական բյուջեից ստացվող միջոցները.

բ) ձեռնարկատիրական գործունեության արդյունքները.

գ) դրամաշնորհները.

դ) օրենքով չարգելված այլ միջոցները:

Դատական դպրոցն իր գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է ինքնուրույն՝ իր առջև դրված նպատակների իրականացման համար:

21. Դատական դպրոցն օրենքին, հիմնադրի որոշումներին կամ սույն կանոնադրությանը համապատասխան տիրապետում, տնօրինում և օգտագործում է Դատական դպրոցի գույքը:

22. Հիմնադիրը կարող է Դատական դպրոցին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից ամրացված գույքը:

V. ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Դատական դպրոցում ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի որոշումներով սահմանված ձևերով, ինչպես նաև առկա, հեռակա և դրսեկության ձևերով:

24. Դատական դպրոցի ունկնդիրներին տրվում է համապատասխան որակավորում և սահմանված կարգի ավարտական վկայական կամ դիպլոմ:

25. Ուսումնամեթոդական աշխատանքները և գործընթացները մշակվում և համակարգվում են Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

VI. ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

26. Դատական դպրոցի վերակազմակերպումը և գործունեության դադարումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

27. Դատական դպրոցի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: